

1. Ս. ՄԱՐԳԱՐ. Երախտիք. պատմութիւն. 30 էջ. Բաղու 1904:

Այս «պատմութիւն» չի ներկայացնում մեր գրականութեան և պարբերական հրատարակութիւնների մէջ շատ անգամ է ծածկուած. հայ ուսանողն աւարտելուց յետոյ գործունէութեան լինելու պարէզ պէտք է ընտրէ. խնդիրը այս կամ այն կերպ լուսաբանողների մեծամասնութիւնը միշտ այն եզրակացութեան է գալիս՝ թէ պէտք է վնաս գիւղը, Թէև մի քանի տասնեակ տարիներ շարունակ լսուած է այս քարոզը, բայց գիւղ գնացող չեղաւ: Երևի այս անյաջող հետևանքը Ա. Մարգարին առիթ է տուել՝ իւր թոյլ ուժերով նորից հրապարակ բերել հնացած խնդիրը: Հեղինակը չէ կամեցել մի լրագրական յօդուածի մէջ ամփոփել իւր մտքերը, այլ գեղարուեստական ձևն է ընտրել և եթէ չենք սխալուած, առաջին անգամ հրապարակ եկել՝ իբրև գեղարուեստական գրող:

«Երախտիք»ը իբրև գեղարուեստական գրութիւն չի միարժէք չունի և ներքին լուսաբանութեան տեսակէտից էլ շատ քիչ բան է տալիս. «փառաւոր դիպլոմը» ծոցը դրած արտասահմանից հայրենիք է վերադառնում հայ երիտասարդ համալսարանաւարտը և ճանապարհին շարունակ այն է մտածում թէ՛ «լինել պէտք է անեմ», հոսանքի հետ, թէ հոսանքի դէմ (?). լինելու ես սովորական մարդը—կռուից փախչող, թէ գաղափարի մարդը—կռուի մէջ նետուող(?) : Ահա այս անորոշ մտաւորականութիւնների մէջ է դիպլոմաւոր նորաւարտը, որովհետև հեղինակի գաղափարներն էլ անորոշ են. «հոսանքի հետ» կամ «հոսանքի դէմ» դարձուածքով ոչինչ չէ որոշուած, որովհետև կայ «հոսանք», որի դէմ գնայն է գաղափարական, բայց կայ և այնպիսի հոսանք, որի հետ գնայն է ամենացանկալին: Նոյնը կարելի է ասել և «կռուից փախչողի» ու «կռուի մէջ նետուողի» մասին. կռիւ էլ կայ, կռիւ էլ. թէ լինէ և հեղինակի իդէալը՝ անորոշ է մնում: Այս մտաւորականութիւնից պարոնին ազատում է երկաթուղու գնացքը մտնող մի նոր «տարիքաւոր» ուղեկից, որի «ուժգնութեամբ արտասանած» ճառից յետոյ նորաւարտը իրեն «կարծում է արեւահեղ ճակատամարտում յաղթուած փախստական»: Այնուհետև նոր ուղեկիցը մի երկար պատմութիւն է անում, որի կարճ միտքն այն է, թէ մի իրաւաբան, արձակուրդի միջոցին մի քանի ամիս մի գիւղում մնալով մի պատահական բարի գործ է կատարում. այս է բոլոր լուսաբանութիւնն ի նպաստ գիւղի: Եթէ Ա. Մարգարը դեռ երիտասարդ է, թող այս առաջին անյաջող փորձից՝ չը վհա-

տուի, այլ շարունակ գեղարուեստական յայտնի գրուածքներ կարդայ, դիտէ, ուսումնասիրէ, աշխատէ կեանքի երևոյթները լաւ ըմբռնել, շտապով հրապարակ գալն ատանձին օգուտ չունի: Մենք անարդար ենք համարում մի գրուածքով հեղինակի գլխին վերջնական դատավճիռ կարդալը:

Դրբոյկը տեղ տեղ հետաքրքրութեամբ է կարդացւում. լեզուի անճշտութիւններ կան. «ուղեղս կրծելով» (էջ 3—4) «դէմինի» (5) «Նայրենախնամ իրաւաբան» (27) «նա այլեւս իմ աչքին մեծ մարդ էր» (30) «դարձաւ նաև ինձ նրախտաւոր» (30): Մի քանի տեղ կրկնուած է «գործնէութիւն», ուրեմն կամաւոր աղճատումն է գործունէութիւն բառի. կրկնուած է «վրա» այն ինչ գրւում է «յետոյ», «բահանայ» և այլն:

2. Մեր էֆենմիին ԳԲՄԻՄԲՆԸ. հրատ. տիկ. Ջարէլի. Բ. Պէնկօ. Մեծ 80ն. (թարգ.) 72 էջ. Ս. Պետերբուրգ. 1905 թ.:

Այժմեան ողւս գիւղական կեանքի մի փոքրիկ, իրական պատկերն է ներկայացնում Պէնկօյի դրբոյկը. վեց տարի տեղող երաշտից ու անբերրութիւնից գիւղական նոյն իսկ հարուստ դասակարգը աղքատացել, թշուառութեան դուռն է ընկել: Հետզհետէ ստիպուած լինելով ծախել իւր եզն ու կովը, ձին ու ոչխարը՝ գիւղացին սովից չը մեռնելու համար, ջնջին կոպէկներ ստանալու մտքով, ծառայում է ուրիշներին և մի կտոր սև հացով կերակրում իւր մերկ ընտանիքը: Ուրիշի դռանը ծառայելն ու ամբողջ օրն արիւն քրտինք թափելով տանջուելը բաւական չէ, դեռ տանտիկնոջից էլ անպատուելն ու գող ու աւազակ փաղաքշական անունների արժանանալն է բարոյապէս տանջում խեղճ գիւղացի բանուորին: Կալուածատէրերն օգուտ քաղելով գիւղացու նեղ օրերից՝ ամենաչնչին վարձով են բանեցնում նրանց, բայց ահա վերջապէս գալիս է «մեծ տօնը», առատ, պտղաբեր տարին. դաշտերը ծածկւում են ոսկեծածան արտերով ու հնձող են կանչում: Խեղճ գիւղացին էլ ցանքս չունի, որ հնձէ. կալուածատէրների աչքը լոյս. սրանք էլի կէս գնով վարձում են գիւղացիներին, որ խոտն ու արտը հնձել տան: Աշխատանքի լաւ տաք ժամանակը, երբ դժուարութեամբ կարելի էր նոր բանուորներ գտնել, մեր գիւղացի հնձուորները բոլորը միասին ցած են դնում գերանդինները և ահա պատրաստ է գործադուլը. նրանք պահանջում են կրկնակի օրավարձ: Կալուածատէրերը կատաղում են. բայց ինչ կարող